ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 10 02 2021 թ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ռուբեն Առաքելյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպման» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել 338 945 500 (երեք հարյուր երեսունութ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման N 02 բաժնի N 05 խմբի N 01 դասի 03 ծրագրի գծով հաստատված հատկացումներից: Կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման N 5 հավելվածի N 7 աղյուսակում նշված (ըստ դասիչների) 1177 ծրագրի «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» 11001 «Հակաականային գործողությունների ենթակա տարածքի հետազննում, քարտեզագրում, նախատեսվող ծավալի աշխատանքների հստակեցում և իրականացվող միջոցառումների պլանավորում» միջոցառումները և հատկացումները օգտագործել «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Դրամաշնորհը տրամադրվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշմամբ նախատեսված 338 945 500 (երեք հարյուր երեսունութ միլիոն ինը հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, որոնք կազմակերպությանը տրամադրվում են վերջինիս գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

4.2. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը, իսկ տարեվերջին չօգտագործված միջոցները ենթակա են վերադարձման պետական բյուջե:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Հումանիտար ականազերծման և
Ք. Երևան, Բագրևանդի 5	փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ք. Վաղարշապատ, Մ. Խորենացու 18
Հ/Հ 9000 1111 3223	Երևանի թիվ 1 գանձապետարան
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 900018002254
	ՀՎՀՀ 04724306

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

_____ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

ՏՆՕՐԵՆ _____ Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ.Տ.

Հավելված
2021 թ. _____ 20-ին
կնքված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N/N ը/կ	Իրականացվելիք միջոցառումը					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	ակնկալվող արդյունքի քանակական ցուցանիշը	վերջնաժամկետը
	Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայություններ	Հաստատված վտանգավոր տարածքների (ՀՎՏ) և կասկածելի վտանգավոր տարածքների (ԿՎՏ) կրճատում	Հաստատված վտանգավոր տարածքների (ՀՎՏ) և կասկածելի վտանգավոր տարածքների (ԿՎՏ) կրճատումն իրենից ներկայացնում է տարածքի՝ վտանգավոր լինելու մասին բացառումը: Այն իրականացվում է տեխնիկական և ոչ տեխնիկական հետազոտության գործողությունների իրականացմամբ, որի արդյունքում վտանգավոր տարածքների մակերեսը կրճատվում է: Այս միջոցառման արդյունքում տարածքը կճանաչվի որպես անվտանգ և կօգտագործվի բնակչության կողմից, ինչպես նաև կնվազեցնի զուտ ականազերծման աշխատանքներին ուղղվող ֆինանսական միջոցների ծավալը:	Հաստատված վտանգավոր տարածքների (ՀՎՏ) և կասկածելի վտանգավոր տարածքների (ԿՎՏ) կրճատում, քառ. մետր	30 000	25.12. 2021

Մուտք № 2/1566/22-455
«02» 02 2021 թ.
Թերթերի թիվը 6

	րի կազմակերպում	Ականազերծման աշխատանքներ	Ականազերծման աշխատանքների իրականացման արդյունքում կնվազեն ականապատ տարածքները, մարդկանց համար ականների ռիսկը կնվազի, իսկ ականազերծված տարածքները կօգտագործվեն գյուղատնտեսական նշանակությամբ: Ականազերծման աշխատանքները կիրականացվեն ձեռքով ականազերծման մեթոդով << Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում, որի արդյունքում 50 000 քմ տարածք կմաքրվի քլաստերային զինամթերքից:	Ականազերծված տարածքների աճ, քառ. մետր	50 000	25.12. 2021
		Ականների վտանգի իրազեկման միջոցառումներ	Ականների վտանգի իրազեկման միջոցառումները նպատակ ունեն անվտանգ վարքագծի կանոններ դրսևորելու նպատակով բնակչության շրջանում բարձրացնել իրազեկվածության մակարդակը, ուստի և բացառելով կամ նվազագույնի հասցնելով հնարավոր ականային պատահարները: Հաշվի առնելով, որ ականազերծման աշխատանքները ժամանակատար և ծախսատար են, ուստի ականների վտանգի իրազեկման միջոցառումները առաջնային նշանակություն ունեն անվտանգ վարքագծի կանոններ ձևավորելու և մարդկանց ականային պատահարներից զերծ պահելու համար:	Իրազեկված չափահաս բնակիչներ և երեխաներ, ինչպես նաև աջակցություն ստացած ականներից և/կամ ՊՊՄ-ներից տուժած անձինք, մարդ	10 000	25.12. 2021
		Ականազերծված տարածքների մոնիտորինգ	Ականազերծված տարածքների մոնիտորինգը նպատակ ունի ճշգրտելու մնացորդային ռիսկի հետ	Մոնիտորինգի ենթարկված նախկինում ականազերծված	30 000	25.12. 2021

		Նշագրված տարածքների մոնիտորինգ	կապված հարցերը, քանի որ ժամանակի ընթացքում սողանքների և անձրևաջրերի արդյունքում հնարավոր է վտանգավոր տարածքից ականները հայտնվեն արդեն իսկ մաքրված տարածքներում, ինչպես նաև հավաստիանալու, թե ինչքանով են նախկինում ականազերծված տարածքները օգտագործվում ազգաբնակչության կողմից (օրինակ՝ եթե տարածքը գյուղատնտեսական նշանակության է, ապա արդյոք ազգաբնակչությունը այն օգտագործում է ըստ նշանակության, թե ոչ): Նշագրված տարածքների մոնիտորինգը նպատակ ունի հավաստիանալու նախկինում տեղադրված ականների վտանգի մասին իրազեկող ցուցանակների և ժապավենների առկայության մասին:	տարածքներ, քառ" մետր Մոնիտորինգի ենթարկված նշագրված տարածքներ, հատ, մետր		

Հաստատում եմ՝ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հաստատում եմ՝ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ